

ի, երբ կը յայտարարէ թէ այդ պատկերա-տիպը (design) առաջին անգամ ըլլալով դրամի վրայ կը տեսնուի Լեւոնի արծաթ-ներուն վրայ:

Արիշան⁵ իր Սխուան հոյակապ գործին մէջ այս հարցին լուծումին կը մօտենայ յայտարարելով թէ Լեւոնի Ա. կողմի ձեւը կը տարբերի Բիւզանդիոնի եւ Արեւելքի դրամներէն եւ կը նմանի Գերմանական տիպին: Արիշանին բառերով «Իսկ ձեւ կամ պատկերը եւ գրութիւն, յայտ իսկ է զլ ամեն նեւին օտարը են ի սառակինեան բիւզանդաց, եւ մերձաւորը՝ այլ ոչ յոյժ յունականացն: Թուի մանաւանդ Լեւոնի Մեծի հետեւեալ Ալամանաց՝ յորոց ընկալաւ զթագն արքայական. քանզի ի դահեկանս սոցին յայնմ ժամանակի երեւին նոյն տիպը առիւծակերպը, դունդ խաչապղուէս եւ վաւազան շուշանեայ ի ձեռն», Արիշան այսքանով կը գոհանայ եւ չ'ըսէր թէ ո՞ր Գերմանական դրամներու պատկերատիպին հետեւած է Լեւոն:

Այս խնդրին մասին աւելի երկարօրէն գրեց վերջերս Smith⁶, մատնանշելով, թէ քանի որ Լեւոն ստացաւ իր թագաւորական տիպոսը Գերմանիոյ կայսր Հենրիկոս 2-էն, շատ հաւանական է որ Լեւոնի դրամին աջ պատկերատիպը Գերմանական էր: Իսկապէս դրամի Ա. կողմը շատ կը նմանի Գերմանական Bracteate կոչուած դրամներուն: Այս վերջինները շատ բարակ դրամներ են, կոչուած փայտէ կնիքով, միայն մէկ կողմի վրայ, որ շրջաբերութեան մէջ էին Լեւոնի ժամանակ Գերմանական նահանգներու մէջ: Այս Bracteateներուն նկարը կու տանք հոս (Պատկեր 3)⁷ եւ ինչպէս կը տեսնուի շատ կը նմանին Լեւոնի դրամներուն Ա. կողմին:



BRACTEATE

Իսկապէս ալ այս եղրակացութիւնները կը համապատասխանեն պատմական անցքերուն: Ինչպէս գիտենք Լեւոն Գերմանիոյ

Փրեաներիկոս Բարբարոսա կայսրէն խնդրած էր թագաւորական թագ եւ խնդանքին գոհացում ստացած: Դժբախտաբար երբ կայսրը բանակով Կիլիկիա հասաւ, արկածով խեղդուեցաւ Սելեւկիոյ գետը ձիով անցած ատեն: Լեւոն յաջողեցաւ կայսեր յաջորդող Հենրիկոս 2-էն ստանալ թագը եւ օծուեցաւ թագաւոր՝ Տարսոնի Մայր եկեղեցիին մէջ Հենրիկոսի ներկայացուցչին եւ հայ կաթողիկոսին ձեռամբ: Այսպէսով անուանապէս Լեւոն եղաւ վասալը (vassal) Հենրիկոս 2 կայսեր եւ թերեւս իբր երախտագիտութիւն դրաւ կայսեր դրամին տիպը իր դրամներուն Ա. կողմին վրայ: Այս պատկերատիպով դրամներ շրջաբերութեան մէջ էին Գերմանիոյ մէջ Հենրիկոս 2-էն առաջ ալ⁸:

Լեւոնի օծման դրամներու վրայ (պատկեր 4), կը տեսնենք թագաւորը թագակիր,



ՕԾՄԱՆ ԴՐԱՄ

արքայական պատմութեան հագած, եւ ծնրագիր Քրիստոսի առջեւ: Դաշտին մէջ Քրիստոսի եւ թագաւորին միջեւ երկնքէն կ'իջնեն ճառագայթներ, կամ Սուրբ Հոգին ազանդի կերպարանքով: Langlois¹, Միպիւլեան⁹ եւ Արիշան⁵ կը կարծեն թէ այս պատկերատիպը (design) ընդօրինակուած է վենետիկի դոժերու դրամներէն: Սակայն վենետիկի այս տեսակի դրամներն առաջին անգամ լոյս տեսած են Դանդալո ԽԸ (Dandolo XLVIII) դոժին կողմէ 1280-89ին — գրեթէ Լեւոնի թագաւորութենէն 90 տարի վերջը^{10, 11}: Ուրեմն այս արուեստին ծագումը պէտք է փնտռել այլուր: Գիտենք որ Բիւզանդական բազմաթիւ դրամներու վրայ կը տեսնուի Քրիստոսը որ կը թագադրէ կայսրը¹²: Շատ հաւանական է որ Լեւոն այս դրամները նկատի առած է իր օծման դրամներու կնիքը շինած ատեն: Հոս ալ սակայն կան հիմնական տարբերութիւններ գծապատկերի մէջ, այնպէս որ Լեւոն հոս ալ ջանացած եւ յաջողած է արտադրել ինքնաշարունակ տիպ մը:

Ինչպէս ըսինք, Լեւոնի դրամներուն մե-

մատնութեան Բ. կողմը կը ներկայացնէ երկու կանդնած առիւծներ (rampant regardant) երկուքին մէջ խաչով մը: Langlois¹³ կարծիքը թէ այդ տեսակի գծապատկերներ կը տեսնուին Մահմետական հայկերէններու եւ այլ առարկաներու վրայ եւ Լեւոն անկէ եւ այլ առարկաներու վրայ կը զարգացնէր առած է այս պատկերատիպին զարգացումը ընդունելի է, որովհետեւ իր յիշած առարկաները կը ներկայացնեն առասպելական անասուններ կնոջ գլխով եւ Լեւոնի դրամի առիւծներուն հետ բնաւ անհնարեալ չունին: Ոչ Միպիւլեան եւ ոչ ալ Արիշան կը խօսին Ոչ Միպիւլեան եւ ոչ ալ Արիշան կը խօսին այս նիւթին մասին, իսկ Կարապետեանի ընդարձակ յօդուածը բնաւ չ'ըլլաւ արդարեւ այս խնդրով:

Այս կրկնառիւծի մասին խօսած եմ բազմաթիւ աշխարհահռչակ դրամագէտներու հետ եւ ոչ մէկը կըրցած է յիշել դրամ մը, որ Լեւոնի արծաթներուն կրկնառիւծ պատկերատիպին նմանի: Ստիպուած կ'եղրակացնենք թէ այս պատկերատիպը (design) նենք թէ այս պատկերատիպը Լեւոն Ա. ի առաջին անգամ ըլլալով երեցաւ Լեւոն Ա. ի արծաթներուն վրայ եւ հետեւաբար կրնանք ըսել թէ ասիկա կարեւոր դրամագիտական գեղարուեստի նորոյթ մըն էր եւ ինքնատիպ հայկական դրամներու:


Առիւծը իր զանազան ձեւերով կը տեսնուի Մերձաւոր Արեւելքի բազմաթիւ յիշատակարաններու վրայ: Այսպէս կը տեսնենք տեսակ տեսակ առիւծներ Պերսեպոլիսի աւերակներուն մէջ, որ աւելի քան 2000 տարուայ հնութիւն ունին¹⁴: Եօթերորդ եւ ութերորդ դարու կերպասներուն վրայ կը տեսնենք գծապատկերներ երկու առիւծներու նստած կամ կանգնած դէմ առ դէմ ունենալով «Կենաց Ծառը» (Tree of Life) մէջտեղը: Սասանեան արծաթէ գաւաթի մը վրայ կը տեսնուին զիրար խաչաձեւած առիւծներ, որ Լեւոնի դրամներու վրայի առիւծները կը յիշեցնեն: Կան Սելջուքեան կերպասներ որոնց վրայ կան կանգնած առիւծներ դէմ առ դէմ¹⁵:

Այնպէս կ'երեւի թէ առիւծներու մոտիվը սկսած շատ հին ժամանակներէ, անցած է Սասանեաններուն եւ անկէ իւրացուցուած Մահմետականներու կողմէ, եւ թերեւս իմաստականներու միջոցաւ մուսուլմաններու, չափերներու միջոցաւ մուսուլմաններու, Կան բազմաթիւ օրինակներ կերպասներու, որոնք առիւծի մոտիվը ունին եւ կը նմանին Լեւոնի դրամի կրկնառիւծներուն, սակայն

միշտ մէջտեղն ունենալով Կենաց Ծառը (Tree of Life) փոխանակ խաչի¹⁶:

Անշուշտ Հայերն ալ դրացի ժողովուրդներու նման գործածած են առիւծը զարգանկարներու համար, ըլլայ պարսկապարտ, եկեղեցիի կամ շէնքերու վրայ: Անիի դրան վրայ կը տեսնուի քաղաք առիւծի պատկեր մը: Strzygowski¹⁷ կու տայ Վասպուրանի թագաւորին գահին պատկերը շինուած 765 թուականին, որուն զարդը կը կազմեն երկու առիւծներ դէմ առ դէմ:

De Beaumont¹⁸ կը գրէ թէ ինքը տեսած է 12րդ դարու աւետարան մը վենետիկի Միսիթարեաններու վանքը, որուն մէջ կը տեսնուի գծապատկերներ երկու առիւծներու ճիշդ Լեւոնի դրամներուն նման, բայց մէջտեղն ունենալով Կենաց Ծառը փոխանակ խաչի: Այս տեսակի պատկերներ կը տեսնուին նաեւ Տէր Ներսէսեանի¹⁹ եւ ուրիշ գրքերու մէջ: Մնացկանեանի²⁰ «Հայ Արուեստի Զարգանկարներ» գրքին մէջ կը տեսնուի գծապատկեր մը 1166 թուականէն, որ կը նմանի Լեւոնի կրկնառիւծներուն (պատկեր 5):



ԶԱՐԳԱՆԿԱՐ

Ուրեմն բաւական փաստեր կան ըսելու թէ կրկնառիւծի պատկերատիպը (design) անծանօթ չէր այդ ժամանակ Հայերուն, բայց այդ տիպին դրամի վրայ գործածուելը եւ Կենաց Ծառին տեղ խաչ գետեղելը, նորուի թիւն մըն էր, որ կը տեսնուի միայն Հայ դրամներու վրայ: Իբր դրամական նոր պատկերատիպ ասիկա անշուշտ պանծալի կէտ մըն է:

Վերը յիշեցինք թէ կան Լեւոնի արծաթ դրամներ, որոնց Բ. կողմը կը տեսնուի մէկ առիւծ մը որ թաթով բռնած է կրկնառիւծ խաչը (պատկեր 1): Երկրորդ տեսակի արծաթներուն վրայ առիւծը կը քալէ ձախ, իսկ թէեւ ճիշդ է թէ կան Bracteate դրամներ,

որոնց վրայ կը տեսնենք առիւծ մը, սակայն անոնք կը տարբերին Լեւոնի առիւծներէն: Լեւոնի առիւծները թագակիր են եւ խաչ բռնած, իսկ Գերմանականները կը ցուցնեն առիւծ մը առանց թագի եւ խաչի: Ուրեմն Լեւոնի դրամները դարձեալ դրամագիրտական նորութիւն մը կը ներկայացնեն իրենց թագակիր՝ խաչը բռնած առիւծով:

Յիշատակելի է որ սուրբ գիրքերու մէջ յաճախ կը տեսնուի դրօշ մը բռնած Գառն Աստուծոյ (Agnus Dei), եւ նոյնիսկ Լեւոնէն յետոյ խաչակիրները Գառն Աստուծոյ դրօշով սկիզբով հանած են²¹: Այս մասին խորհրդակցութիւններ ընելով Smith²² առը: չութիւն մը կը տեսնէ Agnus Dei եւ Լեւոնի խաչ բռնող առիւծին միջեւ: Թերեւս գաղափարի կապ մը կայ երկուքին մէջ, բայց Լեւոնի առիւծը շատ ինքնայատուկ տիպ մը ունի եւ կրնանք մէկ առիւծով դրամները հայկական ինքնայատուկ ոճ եւ կամ պատկերատիպ (design) ունեցող դրամներ նկատել:

Կարժէ քանի մը խօսք ընել նաեւ Լեւոնի պղինձ դրամներուն մասին: Այս դրամները գրեթէ միօրինակ են եւ կը կշռեն 7-8 կրամ: Դրամին Ա. կողմը կը տեսնուի թագապսակ առիւծի մը գլուխը կամ առիւծանման թագաւորին գլուխը, իսկ Բ. կողմը կայ կրկնաթեւ խաչ մը, որուն խառնարան երկու կողմը կը տեսնուին մէկ մէկ աստղեր (պատկեր 6):



Պղինձ դրամ

Այս պղինձներուն մասին խօսած ատեն Langlois²² կ'ըսէ թէ Ա. կողմի պատկերատիպը (design) առնուած է Սիկիլիոյ թագաւորներուն դրամներէն: Սակայն Սիկիլիոյ դրամները կը ներկայացնեն կոշտ առիւծի գլուխ մը, իսկ Լեւոնի դրամներուն վրայի գլուխը տարբեր է ունենալով թագ եւ մօրօք: Այնպէս որ նորէն Հայ դրամները կը ներկայացնեն ինքնայատուկ պատկերատիպ մը (original design):

Պղինձներու Բ. կողմի խաչը յաճախ գործ-

ածուած է բիւզանդական դրամներու վրայ²³, թէեւ հայ դրամները կը տարբերին անոնցմէ, ունենալով երկու աստղեր խաչին հետ:

Եզրակացնելով կրնանք ըսել թէ Լեւոն Ա. ի հառարակ դրամներու Ա. կողմի պատկերատիպը առնուած է Գերմանիոյ Bracteate ըստած դրամներէն, իսկ Բ. կողմի կրկնապատկերատիպ մը (original design), որ կը տեսնուի միայն Կիլիկիոյ հայկական դրամներու վրայ:

Օձման դրամի արուեստը հաւանական է առնուած ըլլայ Բիւզանդիոնի դրամներէն, իսկ մէկ առիւծով դրամները թերեւս նորէն Bracteate կոչուած դրամներէն եւ կամ Agnus Dei (Գառն Աստուծոյ) կոչուած նշանէն: Սակայն կան որոշ կարեւոր տարբերութիւններ այս օձման դրամներուն եւ բիւզանդական դրամներու միջեւ եւ մեծ տարբերութիւններ Լեւոնի մէկ առիւծով դրամներու եւ Bracteate — Agnus Dei դրամներու միջեւ: Այս տարբերութիւնները այնքան մեծ են, որ կրնանք զոնէ մէկ առիւծով դրամներու ոճը կոչել ինքնայատուկ հայկական պատկերատիպ:

Պղինձ դրամին Ա. կողմը դարձեալ ցոյց կու տայ որոշ ինքնայատուկ պատկերատիպ մը. իսկ Բ. կողմը առնուած է բիւզանդական դրամներէն, որոնց վրայ առեցուած են երկու աստղեր:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1. V. Langlois, Numismatique de l'Arménie au Moyen-Age, Paris, 1855, p. 41.
2. G. Schlumberger, Numismatique de l'Orient Latin, Paris, 1878, pl. VII.
3. Պ. Կարապետեան, Հասկ Տարեգիրք, 1949-1950, էջ 279, Անթիլիաս, Լիբանան:
3. M. Petit, Histoire generale des peuples, Paris, 1925, pp. 193, 210.
5. Հ. Ղ. Այիշան, Սիսուան, էջ 279, Վենետիկ, 1885:
6. H. R. Smith, Semetic and Oriental Studies, University of California Publication of Semetic Philology, Vol. XI 1951. pp. 423-427.

SUMMARY THE ORIGIN OF DESIGNS OF THE COINS OF LEVON I

The study of the designs of the coins of Levon I (1198-1218) of Cilician Armenia indicates that the obverse of the trams showing the king seated on a throne ornamented with lions is patterned after the bracteates of Henri VI from whom Levon received his crown. The reverse of these coins having two lions — rampant regardant — is peculiarly Armenian in design and may be considered an important contribution to numismatic art. A number of instances are given where this design of lions flanking the tree of life occurs in textiles, manuscripts etc. The tree of life has been replaced by a cross on the reverse of Levon's coins. The coronation trams are most likely modifications of similar Byzantine coins. The single lion design of the double-tram series showing a crowned lion holding a cross is also quite original in design and markedly different from the lions of bracteates or other coins. The obverse of the copper coins having the leonine head of the king crowned and bearded is again an original design. The reverse of the copper coins is Byzantine in origin with the addition of two stars.

Paul Z. Bedoukian

7. H. Mertens, Der Brakteatfund von Nordhausen, Halle, 1929 pl. VII, XII.
8. H. Buchenau, Der Brakteatfund von Seega, Marburg, 1905. pl. 24, No. 20, 21.
9. Հ. Ղ. Սիպիլեան, Դասակարգութիւն Ռուսական դրամոյ, էջ 8, Վիեննա, 1892:
10. Corpus Numorum Italicorum, Vol. VI, VII, p. 27. pl. I, 23.
11. S. Marco, Coinage of Venice.
12. J. Sabatier, Monnaies Byzantines, n. 126, pl. XLVI, 10, p. 169, L. Paris 1862.
13. M. Reinaud, Vol. II, pl. VIII p. 394.
14. F. Saare, L'Art de la Perse Ancienne, pp. 11, 17, 39, 52, 55-56, 98, 108, 112-3, Paris 1922.
15. G. Migeon, Manuel d'Art Musulman, pp. 381, 395, 417. Paris 1907.
16. Von Falke, Kunstgeschichte der Seidenweberei, pp. 40, 54, 68, 70-77, 80, 90, 131-134, 162. Berlin 1913.
17. J. Strzygowski, Die Baukunst der Armenier und Europa, p. 811, Vienna 1916.
18. S. Der Nersessian, Manuscripts Armeniens Illustrée, pl. XVIII, Fig. 40, Paris 1936.
19. A. De Baumont, Recherches sur l'Origine du Blason, pl. X, 6, 7, pp. 52-53, Paris 1853.
20. Ա. Շ. Մնացկանեան, Հայ Արուեստի Չարդանկարներ էջ 396, թիւ 7374, Երևան, 1955, նկար 828:
21. G. Schlumberger, Numismatique de l'Orient Latin, pl. XIX, 9, Paris 1878.
- P. Grierson, American Numismatic Society, Museum Notes VI, 169-176 pl. XVIII, 1-2, New York, 1954.
22. D. Spinelli, Monete Cufice etc. Napoli, 1844.
23. G. Schlumberger, Numismatique de l'Orient Latin, p. 91, pl. XLIII, 4-5, Paris 1878.

Բ. ԶԱՐԵԶ ՊՏՈՒԿԵԱՆ

ԼԵՒՈՆ Ա.Ի ԹԵ՛ ԼԵՒՈՆ Բ.Ի ԴՐԱՄՆԵՐ

Հանդէս Ամսօրեայի Ապրիլ - Յունիս, 1960 թիւին մէջ (էջ 205-207), Հ. Օ. Սէքուան Լեւոն-Հեթումի ոսկեգրամի մասին խօսելով, եւ Հ. Գ. Գալէմբարեանի կարծիքները կրկնելով (Սիպիլեան էջ 29-31) կը յայտարարէր որ այս ոսկեգրամը կը պատկանի Հեթում Ա.—Լեւոն Բ. ի եւ ոչ թէ Լեւոն Ա.—Հեթում Ա. ի, ինչպէս գրած էի յօդուածիս մէջ (Հանդէս Ամսօրեայ, Յունուար - Մարտ, 1960, էջ 16-27):

Յարգելի Յօդուածագիրը այս կարծիքը աւելի ընդլայնելով, նոյն արուեստով երա-

որոնց վրայ կը տեսնենք առիւծ մը, սակայն անոնք կը տարբերին Լեւոնի առիւծներէն: Լեւոնի առիւծները թագակիր են եւ խաչ բռնած, իսկ Գերմանականները կը ցուցնեն առիւծ մը առանց թագի եւ խաչի: Ուրեմն Լեւոնի դրամները դարձեալ դրամագիրտական նորութիւն մը կը ներկայացնեն իրենց թագակիր՝ խաչը բռնած առիւծով:

Յիշատակելի է որ սուրբ գիրքերու մէջ յաճախ կը տեսնուի դրօշ մը բռնած Գառն Աստուծոյ (Agnus Dei), եւ նոյնիսկ Լեւոնէն յետոյ խաչակիրները Գառն Աստուծոյ դրօշով ոսկեղրամ հանած են²¹: Այս մասին խորհրդակցութիւններ ընելով Smith²² առը- չութիւն մը կը տեսնէ Agnus Dei-ի եւ Լեւոնի խաչ բռնող առիւծին միջեւ: Թերեւս գաղա- փարի կապ մը կայ երկուքին մէջ, բայց Լեւոնի առիւծը շատ ինքնայատուկ տիպ մը ունի եւ կրնանք մէկ առիւծով դրամները հայկական ինքնայատուկ ոճ եւ կամ պատ- կերատիպ (design) ունեցող դրամներ նկա- տել:

Կարժէ քանի մը խօսք ընել նաեւ Լեւոնի պղինձ դրամներուն մասին: Այս դրամները գրեթէ միօրինակ են եւ կը կշռեն 7-8 կրամ: Դրամին Ա. կողմը կը տեսնուի թագապսակ առիւծի մը գլուխը կամ առիւծանման թա- ղաւորին գլուխը, իսկ Բ. կողմը կայ կրկ- նաթեւ խաչ մը, որուն խաւքսին երկու կողմը կը տեսնուին մէկ մէկ աստղեր (պատկեր 6):



Պղինձ ԳԱՆԿ

Այս պղինձներուն մասին խօսած ատեն Langlois²² կ'ըսէ թէ Ա. կողմի պատկերա- տիպը (design) առնուած է Սիկիլիոյ թագա- տրներուն դրամներէն: Սակայն Սիկիլիոյ դրամները կը ներկայացնեն կոշտ առիւծի գլուխ մը, իսկ Լեւոնի դրամներուն վրայի գլուխը տարբեր է ունենալով թագ եւ մօ- րօք: Այնպէս որ նորէն Հայ դրամները կը ներկայացնեն ինքնայատուկ պատկերատիպ մը (original design):

Պղինձներու Բ. կողմի խաչը յաճախ գործ-

ածուած է բիւզանդական դրամներու վրայ²³, թէեւ հայ դրամները կը տարբերին անոնցմէ, ունենալով երկու աստղեր խաչին հետ:

Եղբակացիներով կրնանք ըսել թէ Լեւոն Ա. ի հառարակ դրամներու Ա. կողմի պատ- կերատիպը առնուած է Գերմանիոյ Bracteate ըստած դրամներէն, իսկ Բ. կողմի կրկնա- սիւծը կրնայ նկատուիլ զուտ ինքնայատուկ պատկերատիպ մը (original design), որ կը տեսնուի միայն Կիլիկիոյ հայկական դրամ- ներու վրայ:

Օձման դրամի արուեստը հաւանական է առնուած ըլլայ Բիւզանդիոնի դրամներէն, իսկ մէկ առիւծով դրամները թերեւս նորէն Bracteate կոչուած դրամներէն եւ կամ Agnus Dei (Գառն Աստուծոյ) կոչուած նշա- նէն: Սակայն կան որոշ կարեւոր տարբերու- թիւններ այս օձման դրամներուն եւ բիւ- ղանդական դրամներու միջեւ եւ մեծ տարբե- րութիւններ Լեւոնի մէկ առիւծով դրամնե- րու եւ Bracteate — Agnus Dei դրամներու միջեւ: Այս տարբերութիւնները այնքան մեծ են, որ կրնանք զոնէ մէկ առիւծով դրամ- ներու ոճը կոչել ինքնայատուկ հայկական պատկերատիպ:

Պղինձ դրամին Ա. կողմը դարձեալ ցոյց կու տայ որոշ ինքնայատուկ պատկերատիպ մը. իսկ Բ. կողմը առնուած է բիւզանդական դրամներէն, որոնց վրայ աւելցուած են եր- կու աստղեր:

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

1. V. Langlois, Numismatique de l'Armenie au Moyen-Age, Paris, 1855, p. 41.
2. G. Schlumberger, Numismatique de l'Orient Latin, Paris, 1878, pl. VII.
3. Պ. Կարապետեան, Հասկ Տարեգիրք, 1949-1950, էջ 279, Անթիլիաս, Լիբանան:
3. M. Petit, Histoire generale des peuples, Paris, 1925, pp. 193, 210.
5. Հ. Ղ. Այիշան, Սիսուան, էջ 279, Վենե- տիկ, 1885:
6. H. R. Smith, Semetic and Oriental Studies, University of California Publi- cation of Semetic Philology, Vol. XI 1951. pp. 423-427.

SUMMARY THE ORIGIN OF DESIGNS OF THE COINS OF LEVON I

The study of the designs of the coins of Levon I (1198-1218) of Cilician Armen- ia indicates that the obverse of the trams showing the king seated on a throne or- namented with lions is patterned after the bracteates of Henri VI from whom Levon received his crown. The reverse of these coins having two lions — rampant regard- ant — is peculiarly Armenian in design and may be considered an important con- tribution to numismatic art. A number of instances are given where this design of lions flanking the tree of life occurs in textiles, manuscripts etc. The tree of life has been replaced by a cross on the re- verse of Levon's coins. The coronation trams are most likely modifications of si- milar Byzantine coins. The single lion design of the double-tram series showing a crowned lion holding a cross is also quite original in design and markedly different from the lions of bracteates or other coins. The obverse of the copper coins having the leonine head of the king crowned and bearded is again an original design. The reverse of the copper coins is Byzantine in origin with the addition of two stars.

Paul Z. Bedoukian

7. H. Mertens, Der Brakteatfund von Nordhausen, Halle, 1929 pl. VII, XII.
8. H. Buchenau, Der Brakteatfund von Seega, Marburg, 1905. pl. 24, No. 20, 21.
9. Հ. Ղ. Սիպիլեան, Դասակարգութիւն Ռու- բենեան դրամոյ, էջ 8, Վիեննա, 1892:
10. Corpus Numorum Italicorum, Vol. VI, VII, p. 27. pl. I, 23.
11. S. Marco, Coinage of Venice.
12. J. Sabatier, Monnaies Byzantines, n. 126, pl. XLVI, 10, p. 169, L. Paris 1862.
13. M. Reinaud, Vol. II, pl. VIII p. 394.
14. F. Saare, L'Art de la Perse Ancienne, pp. 11, 17, 39, 52, 55-56, 98, 108, 112-3, Paris 1922.
15. G. Migeon, Manuel d'Art Musulman, pp. 381, 395, 417. Paris 1907.
16. Von Falke, Kunstgeschichte der Sei- denweberei, pp. 40, 54, 68, 70-77, 80, 90, 131-134, 162. Berlin 1913.
17. J. Strzygowski, Die Baukunst der Ar- menier und Europa, p. 811, Vienna 1916.
18. S. Der Nersessian, Manuscripts Arme- niens Illustrée, pl. XVIII, Fig. 40, Pa- ris 1936.
19. A. De Baumont, Recherches sur l'Ori- gin du Blason, pl. X, 6, 7, pp. 52-53, Paris 1853.
20. Ա. Շ. Մնացկանեան, Հայ Արուեստի Չարդանկարներ էջ 396, թիւ 7374, Երե- ւան, 1955, նկար 828:
21. G. Schlumberger, Numismatique de l'Orient Latin, pl. XIX, 9, Paris 1878.
- P. Grierson, American Numismatic Society, Museum Notes VI, 169-176 pl. XVIII, 1-2, New York, 1954.
22. D. Spinelli, Monete Cufice etc. Napoli, 1844.
23. G. Schlumberger, Numismatique de l'Orient Latin, p. 91, pl. XLIII, 4-5, Paris 1878.

Բ. ԶԱՐԵԶ ՊՏՈՒԿԵԱՆ

ԼԵՒՈՆ Ա.Ի ԹԵ՛ ԼԵՒՈՆ Բ.Ի ԴՐԱՄՆԵՐ

Հանդէս Ամսօրեայի Ապրիլ - Յունիս, 1960 թիւին մէջ (էջ 205-207), Հ. Օ. Սէքու- լեան Լեւոն-Հեթումի ոսկեղրամի մասին խօսելով, եւ Հ. Գ. Գալէմբարեանի կար- ծիքները կրկնելով (Սիպիլեան էջ 29-31) կը յայտարարէր որ այս ոսկեղրամը կը պատ- կանի Հեթում Ա. — Լեւոն Բ. ի եւ ոչ թէ Լեւոն Ա. — Հեթում Ա. ի, ինչպէս զրած էի յօդու- ծիս մէջ (Հանդէս Ամսօրեայ, Յունուար - Մարտ, 1960, էջ 16-27):

Յարգելի Յօդուածագիրը այս կարծիքը աւելի ընդլայնելով, նոյն արուեստով ելած

